Կալիֆորնիայի Զոհերի Փոխհատուցման Ծրագիր (CalVCP)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ՝

CalVCP-ի Ներածություն	2
Օգնություն Ստանալ Տեղական Կարգով	2
Ով է Իրավասու	3
Երեխա Վկա	4
Ինչպես Դառնալ Իրավասու	4
Վճարված Ծախսեր	6
Անհետաձգելի Վճարներ	6
Տեղափոխություն	6
Դիմելու Գործընթաց	7
Փոխհատուցում Ստանալու Իրավունք	9
Բողոքարկելու Իրավունք	10

CalVCP

ԴԻՄԵՔ CalVCP-ին՝

Ավելի մանրամասն տեղեկատվության համար զանգահարեք՝ 800.777.9229 հեռախոսահամարով կամ այցելեք calvcp.ca.gov կայքը

Ի՞ՆՉ Է ԶՈՀԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ՝

Հիմնադրված 1965թ-ին՝ Կալիֆորնիայի Զոհերի Փոխհատուցման Ծրագիրը (CalVCP) պետական ծրագիր է, որը նվիրված է փոխհատուցումների տրամադրմանը՝ հանցագործություններին առնչվող շատ ծախսերի դիմաց, դրան իրավասու զոհերին, որոնք կրել են ֆիզիկական վնասներ կամ ենթարկվել են ֆիզիկական վնաս ստանալու սպառնալիքի, որպես դաժան հանցագործության անմիջական հետևանք:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ՝

Զոհերի Վկանների Աջակցության Կենտրոնի իրավապաշտպանները ողջ նահանգում անմիջականորեն աշխատում են CalVCP-ի հետ՝ փոխհատուցման համար դիմած զոհերին աջակցելու և քրեական արդարադատության համակարգը ուղղորդելու համար:

Կապ հաստատեք զոհերի իրավապաշտպանի հետ և գտեք զոհերին առնչվող լրացուցիչ աղբյուրներ և ծառայություններ Ձեր Քաունթիում (Գավառում)՝ այցելելով մեր Տեղական Օգնության կայքէջը՝ **calvcp.ca.gov/localhelp.aspx**

Ո՞Վ Է ԻՐԱՎԱՍՈՒ ԶՈՀԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝

CalVCP-ը կարող է օգնել այնպիսի հանցագործությունների զոհերին ինչպիսիք են՝

- Ոտնձգություն
- Երեխայի նկատմամբ բռնություն
- Ընտանեկան բռնություն
- Հարբած վիճակում մեքենայի վարում
- Մեծահասակների նկատմամբ բռնություն
- Ատելության հիմքով հանցագործություն
- Սպանություն
- Մարդավաճառություն (թրաֆիքինգ)
- Սեռական ոտնձգությունը ինտերնետի միջոցով
- Կողոպուտ
- Սեռական բնույթով հարձակում
- Հետապնդել (հալածել)
- Մարդասպանությոան (մեքենայով)

ČalVCP-ը կարող է օգնել Կալիֆորնիայում տեղի ունեցած հանցագործության ենթարկված իրավասու զոհերին, ինչպես նաև Կալիֆորնիայի մշտաբնակներին, որոնք զոհ են դարձել այլ նահանգներ կամ երկրներ իրենց այցի ընթացքում:

CalVCP-ը կարող է օգնել այլ անձանց, որոնք ենթարկվել են հանցագործության ազդեցությանը, ներառյալ՝:

- Ամուսին կամ Քաղաքացիական զուգընկեր
- Երեխաներ
- Ծնողներ
- Օրենքով Լիազորված Խնամակալ
- Յուրաքանչյուր ոք, ով ստանձնել է իրավական կամ ֆինանսական պարտավորություն մահացած զոհի ծախսերի համար
- Երեխա վկա
- Եղբայրներ և քույրեր
- Տատիկներ/պապիկներ
- Թոռներ
- Զոհի հետ միևնույն տնային տնտեսությունում երկու տարուց ոչ պակաս կամ հանցագործության պահին բնակվող անձ:

Ի՞ՆՉ, ԵԹԵ ԵՐԵԽԱՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԴԱԺԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԿԱ՝

18 տարեկանից ցածր երեխաները, որոնք կրել են հուզական վնաս՝ դաժան հանցագործության վկայության արդյունքում, կարող են իրավասու լինել որպես հոգեբանական խորհրդատվության նպաստառու, անգամ եթե նրանք որևէ հարաբերկցական կապ չունեն զոհի հետ: Անչափահաս վկան պետք է շատ մոտ գտնված լինի հանցագործությանը:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԻՐԱՎԱՍՈՒ ԼԻՆԵԼ ՋՈՀԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝

- Խնդրում ենք զեկուցել է հանցագործությունը ոստիկանության, ոստիկանապետին, երեխաների պաշտպանության ծառայություններ, կամ որեւէ այլ իրավապահ գործակալությանը.
- Դիմել է CalVCP երեք տարվա ընթացքում օրվանից հանցագործության, (որովհետեւ դիմումների-ին կամ դրանից հետո. Հունվարի 1, 2013):
- Փոքր զոհերը (մինչեւ 18 տարեկան) կարող են դիմել մինչեւ իրենց 21-րդ ծննդյան օրը: Անչափահասները, ովքեր զոհ են սեռական հարձակման, նրանք կարող են դիմել ցանկացած ժամանակ, մինչեւ որ հասնում են 28 տարեկանում:
- Խոհեմորեն համագործակցեք օրենսդրական մարմինների հետ հանցագործության հետախուզության և դատական վարույթի ընթացքում:
- Համագործակցեք CalVCP-ի հետ՝ տրամադրելով դիմումը և ծախսերը վերանայելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը:
- Այն չի կարող լինել ներգրավված միջոցառումներին, որոնք հանգեցրին այդ հանցագործության:

ԻՆՉՊԻՍԻ՞ ԾԱԽՍԵՐԻ ՎՃԱՐՄԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՕԺԱՆԴԱԿԵԼ CALVCP-ԻՆ՝

CalVCP կարող է օգնել վճարել հանցագործության համար հետ կապված ծախսերի, ինչպիսիք են:

- Բժշկական կամ ատամնաբուժական բուժում
- Մտավոր առողջության ծառայություններ
- Եկամտի կորուստ
- Թաղման և հուղարկավորության ծախսեր
- Խնամարկյալների աջակցության կորուստ՝ զոհի մահվան կամ մշտական հաշմանդամության դեպքում
- Բնակության վայրի անվտանգություն
- Տեղափոխություն
- Հանցագործության վայրի մաքրում
- Տան կամ փոխադրամիջոցի ձևափոխումներ՝ զոհի հաշմանդամության դեպքում
- Բժշկական սարքավորումներ

Կան սահմանափակումներ, թե որքան կարող է վճարվել յուրաքանչյուր կորստի համար:

ԻՆՉՊԻՍԻ՞ ԾԱԽՍԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՎՃԱՐՎԵԼ **CALVCP** ԿՈՂՄԻՑ՝

- Հանցագործությանը չառնչվող ցանկացած ծախսեր
- Ապահովագրության կամ փոխհատուցման կամ մեկ այլ ծածկույթի շրջանակներում վճարված ծախսեր
- Կորցված, գողացված կամ վնասված գույքի դիմաց ծախսեր
- Ցավի և տառապանքի դիմաց վնասները

CalVCP չեք կարող վճարել ծախսերը, իսկ անձը ենթակա է վաղաժամկետ ազատման, փորձաշրջանի, ազատ արձակվելուց հետո տակ համայնքային վերահսկողության համար բռնի հանցագործության, ազատազրկված կամ պահանջվում է օրենքով արձանագրուելու հանցավորի սեռական հանցագործությունների:

ԵԹԵ ԵՍ ԱՆՀԱՊԱՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՄ՝

Որոշակի դեպքերում CalVCP-ը կարող է դիմորդին տրամադրել անհետաձգելի ֆինանսական աջակցություն 30 օրվա ընթացքում: Օրինակ՝ Դուք կարող եք իրավասու լինել անհետաձգելի աջակցություն ստանալու համար, եթե Ձեր անձնական անվտանգությունը վտանգի տակ է, և Դուք տեղափոխության կարիք ունեք: Անհրաժեշտ փաստաթղթերը պետք է տրամադրվեն ժամանակին.

ԱՐԴՅՈ՞Ք CALVCP-Ը ԿՎՃԱՐԻ ԻՄ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ՝

CalVCP-ը կարող է օգնել վճարել տեղափոխության ծախսերը, օրինակ ինչպես՝ առաջին և վերջին ամիսների վարձակալությունը, երաշխիքային վճարները, ժամանակավոր կացարանը՝ եթե զոհը տեղափոխության կարիք ունի անձնական անվտանգության կամ հուզական առողջության համար.

Տեղափոխության ձևաթղթերը հասանելի են **calvcp.ca.gov** կայքում: Զոհերի տեղական իրավապաշտպանները կարող են աջակցել տվյալ գործընթացում.

Ի՞ՆՉ, ԵԹԵ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿՈՐՍՎԵԼ, ԳՈՂԱՑՎԵԼ ԿԱՄ ՓՉԱՑՎԵԼ ԵՆ՝

CalVCP-ը կարող է վճարել բժշկական անհրաժեշտ պարագաների համար, ինչպիսիք են հաշմանդամի սայլակը, քայլակը, ակնոցները կամ պրոթեզավորված ատամները, որոնք կորսվել, գողացվել կամ կոտրվել են հանցագործության արդյունքում կամ որոնց կարիքը առաջացել է հանցագործության հետևանքով.

Ի՞ՆՉ, ԵԹԵ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ՝

CalVCP-ը հանդիսանում է վերջին հերթին վճարող, և կարող է զոհերին փոխհատուցել միայն հանցագործությանը առնչվող ծախսերը՝ եթե չկա որևէ այլ փոխհատուցման աղբյուր: Եթե CalVCP-ը զոհին փոխհատուցում է կրած ճասի ծախսերը, սակայն մեկ այլ ֆինանսավորող աբյուր հասանելի է դառնում զոհին միևնույն իրավասու դեպքի համար, CalVCP-ին շնորհված է փոհատուցվելու իրավունք:

CalVCP-ը համագործակցում է ապահովագրական ընկերությունների հետ՝ որոշելու, թե հաշվի որքան մասն է ենթակա վճարման: Միայն ապահովագրական կամ այլ աղբյուրների կողմից չվճարված ծախսերը կարող են դիտարկվել փոխհատուցման համար, որոնք կարող են ներառել՝ համավճարներ, հետ-պահվող գումարներ և ծախսերի վճարման մասնաբաժիններ:

ԻՆՉՊԵ՞Ս Է **CALVCP**-Ը ՎՃԱՐՈՒՄ ԻՄ ՀԱՇԻՎՆԵՐԸ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԸ՝

CalVCP-ը հանդիսանում է վերջին հերթին վճարող և պետք է վերստուգի փոխհատուցման մյուս բոլոր աղբյուրները:

CalVCP-ը կհաղորդակցվի մատակարարների հետ՝ հավաստելու, որ բոլոր հաշիվները առնչվում էն հանցագործության հետ, կիրառելու վճարման դրույքներ, և դեպքերի մեծ մասում, անմիջականորեն վճարելու մատակարարին՝ բժշկական և մտավոր առողջության հետ կապված ծախսերը:

Եթե զոհը բացակայել է աշխատանքից հանցագործության հետևանքով կրած ճսասվածքի պատճառով և դիմում է աշխատավարձի կորստի համար, ապա CalVCP-ը տեղեկատվություն կպահանջի գործատուից և անաշխատունակության հավաստիք առողջապահական խնամք տրամադրողից: Եթե զոհը ինքնազբաղ է, CalVCP-ը կպահանջի երկու տարվա հարկերի հայտարարագիր:

Եթե զոհը արդեն վճարել է ծախսերը նախքան CalVCP-ին դիմում ներկայացնելը՝ ապա նա անմիջականորեն կփոխհատուցվի:

Եթե CalVCP-ը վճարել է մատակարարին և մատակարարը կանխիկ գումար է ստացել համաձայն անդորրագրի, ապա մատակարարը չի կարող պահանջել զոհից ավել գումար վճարել այդ անդորրագրի դիմաց: Եթե զոհին պահանջ է ներկայացվում վճարել որևէ գումար ծրագրի կողմից արդեն իսկ վճարված անդորրագրի դիմաց, ապա զոհի իրավապաշտպանը պետք է տեղեկացվի այդ մասին, կամ զոհը պետք է զանգահարի CalVCP՝ **800.777.9229** հեռախոսահամարով:

ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԴԻՄԵՄ ԶՈՀԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝

- Կապ հաստատեք Ձեր տեղամասային Զոհերի Վկաների Աջակցման Կենտրոնի հետ՝ **calvcp.ca.gov/localhelp.aspx** կայքի միջոցով: Զոհերի իրավապաշտպանը կարող է օգնել զոհին դիմումը լրացնելու և ներկայացնելու գործընթացներում, ինչպես նաև օժանդակել զոհերին քրեական արդարադատության համակարգի վերաբերյալ լրացուցիչ գիտելիքներ ձեռք բերելու հարցում:
- Զանգահարեք CalVCP՝ **800.777.9229** հեռախոսահամարով:
- Ներբեռնեք դիմումի ձևը **calvcp.ca.gov** կայքից:
- Ուղարկեք դիմումը CalVCP-ին՝ **info@vcgcb.ca.gov** էլ.հասցեով:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԵՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՄ ԻՄ ԴԻՄՈՒՄԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ՝

Հասանելիության դեպքում՝

- Բժշկական ապահովագրության քարտը
- Հանցագործության հետևանքով պատճառված վնասվածքները փաստող բժշկական գրառումները՝ եթե կիրառելի է
- Անմիջականորեն հանցագործությանը առնչվող բժշկական, ատամնաբուժական կամ մտավոր առողջության հաշիվները
- Ցանկացած ստացական, որը հավաստում է հանցագործությանը առնչվող հաշիվների կամ ծախսերի վճարումը:
- Հանցագործության ամբողջական զեկույցը՝ եթե հասանելի է

Հաշիվները և տեղեկանքները ներկայացնել հետևյալ հասցեով՝
CalVCP
P.O. Box 3036
Sacramento, CA 95812-3036

ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՐՈՂ ԵՄ ՍՏԱՆԱԼ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ **CALVCP** ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝

Այո: Դատավորները կարող են վճիռ կայացնել օրինազանցներից փոխհատուցում պահանջելու վերաբերյալ՝ ի օգուտ բոլոր զոհերի, որոնք ֆինանսական կորուստներ են կրել հանցագործության հետևանքով: Զոհերը կարող են ցանկություն ունենալ համագործակցելու իրենց իրավապաշտպանի, շրջանային փոխդատախազի (deputy district attorney) և/կամ քաունթիի (գավառի) պայմանական հետաձգման գրասենյակի հետ՝ հանցագործությանը առնչվող ծախսերը ներկայացնելու համար՝ որպեսզի դատավորը կարողանա փոխհատուցման վճիռ կայացնել:

Կա փոխհատուցման երկու տեսակ՝ վճռի հիման վրա և որպես տուգանք: Տուգանքը՝ դա այն գումարն է, որը որոշվում է կատարված հանցանքի տեսակից ելնելով, որը պետք է օրինազանց անձը վճարի որպես իր պարտքը հասարակությանը: Այնպիսի հանցագործություններ ինչպիսիք են սպանությունը, թմրամիջոցները, բռնաբարությունը, առևանգումը ենթակա են որպես քրեական հանցագործության տուգանքների փոխհատուցում՝ 200-ից մինչև 10,000 ԱՄՆ դոլար: Տուգանքները անմիջապես ուղղորդվում են Պետական Փոխհատուցման Հիմնադրամ՝ զոհերի փոխհատուցման համար միջոցների տրամադրման նպատակով:

Վճռի հիման վրա փոխհատուցման գումարը որոշվում է դատավորի կողմից՝ զոհից և մեղադրող կողմից ստացված օգնության հիման վրա, որը ենթակա է վճարման անմիջապես զոհին կամ նրա ընտանիքին՝ հանցագործության իրական ծախսերի համար: Եթե օրինազանց անձը դատապարտվում է, ապա դատարանը պետք է կայացնի փոխհատուցման վերաբերյալ վճիռ՝ պահանջ ներկայացնելով վճարել զոհին հանցագործության հետևանքով կրած իրական ֆինանսական կորստի համար:

Հաճախ, զոհերը ունենում են հանցագործությանը առնչվող այնպիսի ծախսեր, որոնց համար պահանջվում է փոխհատուցում՝ նախքան օրինազանց անձի կողմից փոխհատուցումս հասանելի կլինի: CalVCP-ը կարող է ֆինանսական աջակցություն տրամադրել վճարման ենթակա ծախսերի համար, մինչև փոխհատուցումս հասանելի կլինի: Տվյալ փուլում արդեն վճարները ենթակա են փոխհատուցման CalVCP-ին:

ԱՐԴՅՈ՞Ք ԵՍ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՄ՝

Այո, եթե Դուք համաձայն չեք Ձեր իրավասությունը կամ ծախսը մերժելու առաջարկի հետ, ապա Դուք կարող եք բողոք ներկայացնել 45 օրվա ընթացքում: Բողոք ներկայացնելու համար Դուք չունեք իրավապաշտպանի կարիք: Ավելի մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել մեր կայքը **calvcp.ca.gov** հասցեով, կամ զանգահարել՝ **800.777.9229** հեռախոսահամարով:

ՀԱՅՑԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ՝

CalVCP-ին ներկայացված բոլոր հայցերը գաղտնի են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: CalVCP-ը զոհի վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտում է միայն գրավոր համաձայնության հիմքով: Եթե զոհը երեխա է կամ անաշխատունակ չափահաս, ապա գրավոր համաձայնությունը պետք է տրամադրվի ծնողի, խնամակալի, կամ որևէ այլ անձի կողմից, որը իրավաբանորեն լիազորված է զոհին ներկայացնելու համար:

CalVCP

Կալիֆորնիայի Զոհերի Փոխհատուցման Ծրագիր

P.O. Box 3036
Sacramento, CA 95812-3036

800.777.9229
info@vcgcb.ca.gov
calvcp.ca.gov

Տրամադրվում է բոլոր լեզուներով: Խլության կամ լսողության դժվարությունների դեպքում խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի Ռելեային Կապի Ծառայությանը (California Relay Services)՝ 711 հեռախոսահամարով:

rev. 4.12.2016

Այս փաստաթուղթը արդեն տպագրվել է CalVCP տակ 2014-VF-GX-K012, պարգեւատրվել է գրասենյակի համար ոճրագործության զոհերի, Office of Justice ծրագրերի, արդարադատության դեպարտամենտի Միացյալ Նահանգներում. Կարծիքներ, ու եզրակացությունները սույն փաստաթղթում պարունակվող են ներդրում եւ չեն արտացոլում պաշտոնական քաղաքականությունը ՀՀ արդարադատության նախարարության Միացյալ Նահանգների